ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ

Co-funded by the European Union

Ուղենիշ համայնքային իշխանությունների, երիտասարդական կազմակերպությունների, ոլորտային դերակատարների և յուրաքանչյուր երիտասարդի համար:

ՀԱՐՑ

Ի՞նչը կարող է նպաստել երիտասարդական տեղական քաղաքականության ինստիտուցիոնալ զարգացմանը:

ՊԱՏԱՍԽԱՆԻ ՄԵՐ ՏԱՐԲԵՐԱԿԸ.

- Հայաստանի Հանրապետության երիտասարդական քաղաքականության մասին օրենքով երիտասարդական տեղական քաղաքականության պարտադիր պահանջի ամրագրում,
- Երիտասարդական տեղական քաղաքականության որակի ապահովման մեխանիզմների ամրագրում պետական լիազոր մարմնի կողմից՝ համապատասխան չափանիշների ու չափորոշիչների, ինչպես նաև համայնքապետարանների համար նախատեսված ինքնագնահատման գործիքի առկայությամբ,
- Համայնքներում երիտասարդության հարցերով պատասխանատուի ինստիտուտի ներդրում և համայնքի ակտիվ երիտասարդների հետ վերջիններիս փոխգործակցության արդյունավետությանն ու արհեստավարժությանը միտված կարողությունների համատեղ զարգացում՝ 50/50 ձևաչափով,
- «Երիտասարդների համար գրավիչ համայնքի» (Youth-friendly city) հավաստագրի ներդրում՝ եվրոպական ճանաչված մոդելների օրինակի տեղայնացմամբ,
- Տարվա երիտասարդական մայրաքաղաքի կարգավիճակի շնորհման չափորոշիչների հստակեցում և հաղթող համայնքներին ընձեռվող հնարավորությունների ընդլայնում:

«Երիտասարդները գործելիս. Հայաստանում երիտասարդների զորեղացման և առաջնորդության խթանման» ծրագիրը Եվրոպական միության և Կոնրադ Ադենաուեր հիմնադրամի կողմից ֆինանսավորվող նախաձեռնություն է, որն իրականացվում է Վորլդ Վիժն Հայաստանի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի և Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն»–ի հետ համատեղ:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն հասարակական կազմակերպությունը, եւ պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Օգտագործված գրականության և օգտակար հղումների ցանկ

ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ.

ԻՆՉՈ՞Ւ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս

Աննա Եղոյան, Արթուր Նաջարյան
«Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Տեղական իրավական դաշտի զարգացումը հանգեցրեց նրան, որ 22 օրենքի ամրագրումներ, համալրումներ եղան տարբեր ոլորտներում: Երիտասարդական տեղական քաղաքականության զարգացման ուղղությամբ ամենաշատ աշխատանքներ տարվեցին 2020-2021 թվականներին: Ինչպես նշվեցին նաև հարցազրույցներում, ամենամեծ խնդիրը ֆինանսական ռեսուրսների բացակայությունն է: Ինչպես նաև հարցազրույցներում նշվեցին

ԵՏՔ*-ի սկզբունքներ

Իրավահեն. ԵՏՔ-ն երիտասարդներին դիտարկում է որպես իրավունքների կրող, իսկ երիտասարդական քաղաքականության մշակողներին և իրականացնողներին՝ այդ իրավունքների իրացման պատասխանատուներ:

Զորեղացնող. ԵՏՔ-ի հիմքում դրված է այն մոտեցումը, որ երիտասարդությունը բարիք է ստեղծում: Երիտասարդների ներուժը օգտագործվում է բոլոր հնարավոր ոլորտներում առավելագույն կերպով, թե՛ ի շահ իրենց, թե՛ ի շահ համայնքի զարգացման:

Մասնակցային. երիտասարդների, երիտասարդական խմբերի անմիջական և միջնորդավորված (երիտասարդական քաղաքացիական հասարակության կառույցների միջոցով) լիիրավ մասնակցության ապահովման տեսլականը ենթադրում է տեղեկացվածությունից անցում դեպի նախաձեռնողականություն ցուցաբերում և ներգրավվում՝ քաղաքականություն մշակողների հետ համատեղ որոշումների կայացման համար:

Հավասար և ներառական. բոլոր երիտասարդները (սակավ հնարավորություն ունեցող երիտասարդները՝ լրացուցիչ աջակցության միջոցով), պետական և համայնքային կառույցներն ու գերատեսչությունները, ինչպես նաև երիտասարդական կազմակերպություններն ունեն ռազմավարությունների մշակմանն ու գործողությունների իրականացմանը մասնակցելու հավասար հնարավորություններ:

Ինքնավար և անկախ. երիտասարդներն իրենց կամքով և առանց ճնշումների մասնակցում են նախընտրելի ոլորտի գործողություններին: Երիտասարդներն իրենք են ընտրում գործունեության ոլորտն ու սահմանում նպատակները, ապահովում են իրենց ակտիվ մասնակցությունն ու պատասխանատու են սահմանված նպատակների իրականացման համար:

Նորարար. ԵՏՔ-ն շարունակաբար խթանում է նորարարությունն և նոր լուծումների որոնումը՝ առկա հիմնախնդիրների լուծման, ինչպես նաև այլ խնդիրների կանխարգելման համար:

Փաստահեն. ԵՏՔ-ի մշակումն ու իրականացումը հիմնված են հուսալի, թարմ հետազոտությունների, մշտադիտարկումների, գնահատումների և այլ փաստերի վրա:

Չափելի. հստակ սահմանված են ԵՏՔ-ի իրականացման ընդհանուր ու մասնավոր արդյունքները և այդ արդյունքների չափման մեխանիզմները:

Թափանցիկ և հաշվետվողական. ԵՏՔ-ի մշակման, իրականացման և գնահատման պատասխանատուներն իրականացնում են իրենց աշխատանքները հրապարակային կերպով և պարբերաբար հաշվետվություն են ներկայացնում երիտասարդներին:

Համագործակցային. ԵՏՔ-ի պատասխանատու մարմինների և երիտասարդության համար ոլորտի գործընկեր կառույցների աշխատանքն արդյունավետ կերպով համակարգվում է՝ կրկնություններից խուսափելու և սիներգիաների կառուցման նպատակով ինչպես ոլորտի ներսում, այնպես էլ՝ միջոլորտային համագործակցության շրջանակներում:

Համաժամանակեցված. ԵՏՔ-ն համաժամանակեցված է ՀՀ և տվյալ համայնքի զարգացման հեռանկարային ռազմավարություններին, ուղղված է դրանց իրականացմանը կամ իրականացման նախադրյալների ստեղծմանը, ուղղորդվում է հստակ սահմանված ռազմավարական նպատակներով, և յուրաքանչյուր գործողություն շարունակում է կառուցվել ձեռք բերված նվաճումների և արդյունքների հիման վրա:

* Երիտասարդական տեղական քաղաքականության փոխարեն տեքստում օգտագործված է «ԵՏՔ» հապավումը

ԵՏՔ*

ԻՆՉՊԻՍԻՆ ՊԵՏՔ Է ԼԻՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ՄՇԱԿՎԻ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Իրազեկում. պետական և համայնքային կառույցները, գերատեսչությունները, ինչպես նաև երիտասարդական կազմակերպությունները ընդունելի և մատչելի ձևով իրազեկում են երիտասարդներին իրենց վերաբերող հարցերի մասին:

Կառուցողական երկխոսություն. երիտասարդների հետ իրականացվում են քննարկումներ՝ նրանց կարիքների և ԵՏՔ-ի մշակման վերաբերյալ:

Տեղական իրավիճակի վերլուծություն. տեղեկատվություն է հավաքագրվում երիտասարդներին տրամադրվող ծառայությունների, ծրագրերի ու այլ հնարավորությունների մասին, և ուսումնասիրվում է երիտասարդության ներկա իրավիճակը:

Համաղեկավարման ապահովում. երիտասարդներն ու քաղաքական գործիչները համախմբվում են երիտասարդության հարցերի շուրջ քննարկումների և որոշումների կայացման համար՝ որպես մեկ ընդհանուր մարմին:

Քաղաքականության մշակում և իրականացում. երիտասարդների կարիքներին, ձգտումներին ու ակնկալիքներին համապատասխան մշակվում ու իրականացվում են կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր՝ սահմանելով առաջնահերթությունները, հատկացվող ռեսուրսները, իրականացման հստակ ժամկետներն ու պատասխանատուներին, ինչպես նաև հնարավոր գործընկերներին:

Տեղական և պետական քաղաքականությունների միջև կապի ապահովում. ԵՏՔ-ն մշակելիս համոզվել, որ այն համապատասխանում է երիտասարդական պետական քաղաքականությանը և հակառակը:

Երիտասարդական քաղաքականության իրականացման համար միջոցների հատկացում. երիտասարդների համար կան ռեսուրսներ, որպեսզի կարողանան ակտիվորեն ներգրավվել ԵՏՔ-ի մշակման և իրականացման մեջ: Նրանց անհրաժեշտ է կարողությունների զարգացում, ֆիզիկական տարածք, տեղեկատվություն, ֆինանսավորում և այլն:

Միջգերատեսչական փոխգործակցություն. երիտասարդության ոլորտի հետ կապված հարցերը լուծելիս պետական և համայնքային կառույցներն ու գերատեսչությունները հաղորդակցվում ու համագործակցում են միմյանց հետ:

Հաղորդակցություն և համագործակցություն. համայնքի երիտասարդական կազմակերպությունները հաղորդակցվում ու համագործակցում են ՀՀ-ի և այլ երկրների երիտասարդական կազմակերպությունների, պետական և համայնքային կառույցների ու գործակալությունների, և այլ ֆիզիկական ու իրավաբանական անձանց հետ:

Ազդեցության գնահատում. ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը և ԵՏՔ որակն ապահովելու համար այն պարբերաբար գնահատվում ու համապատասխանեցվում է երիտասարդների անընդհատ փոփոխվող կարիքներին:

Տեսանելիության ապահովում. արդյունքները ներկայացնելու և ավելի շատ երիտասարդներ ներգրավելու համար ԵՏՔ-ն տեսանելի է:

Co-funded by the European Union
KONRAD ADENAUER STIFTUNG
YIC YOUTH INITIATIVE CENTRE
World Vision ARMENIA
MEDIA INITIATIVES CENTER